## 281. ՉԵՏՆԱՐ

Մին կնիգյ շատ փիս լեզվանի յա ինում, մարթին օր ու արև չար տում։ Խեղճ մարթը գյունդում չար, թե հինչ անե, վրեր տրանա ազատվի։ Մին օր տա եր ա կենում, կնգանն ասում.—Էս քշեր ըրազումքս իմ հորքս տընաալ ըմ, ասալ ա էտհինչ տըեղը, ժամական մոտե մին հոր կա, էտ հորումն էլ շատ վրեսկե կա, սոր տու տանը կաց, ես քյինիմ տունա օնեմ, պիրիմ։ Կնեգյը մարթին յախան հըվաքում ա, ասում.—Ես էլ ըմ կյամ։ Մարթը թե՝ ա՛ կնեգյ, տու կաց, տանը-տուանը եշի, ես քյինիմ քանդիմ, վրեսկեն տունա օնեմ, պիրիմ։ Կնեգյն ըսկըսում ա տրան ծրեռքավն օնելը ու ուշունց տալը։ Մարթը ճարը կտրած, ասում ա։—Դե լա՛վ, կյամ ըս, եք։ Մինչև էտ, մարթը քյինացած ա ինում ժամական մոտե մին հոր կտրած, վրեր կնգանը տանե քցի մեջը։

Բիրանդի հոգե յըն ինում, քյինում։ Հորան վրեր մուտանում ըն, մարթը քոռ յա տում, կնգանը քցում մեջը։ Էտ կնգանն անումը Զեյնաբ ա ինում։ Տա վրեր ինգյում ա հորը, տըեղ մին զալում օց ա պտահում։ Զեյնաբը էտ օցեն պոկը հունց հըվաքում ա, վրեր օցը կոչ ա կյամ, կծեգյ տանում, օգում ա մին Թանհր անե տունա կյա, կարում չի։

Մին քանի օր վրեր անց ա կենում, մարթն ասում ա քյինիմ տըեսնամ մըեր էս օցը կծածը հինչ ա տանում, ապրում ա, մըեռած ա, թե չէ։ Վրեր քյինում ա հորեն քարը պիցրրցընում ա, եշում ա, տըեսնում մին օց կոչ եկած, տանած մին Թիքյա։ Տա վրեր քարը պիցրրցընում ա, էտ օցը լունդեն հանում ա, դաշանք անում, ասում հինչ լավ տատավ, վրեր եկեր, մին Թանհր ըրա, ինձ ըստեղաս տունա

կալ, էս քանի օրեն Զեյնաբը հոքիս կալալ ա, էլ էն տըեղը չի, ինձ ըստեղաս ազատե, քեզ հինչ լիվոթուն ասես, կանեմ։ Էտ մարթը օցեն տեղատ տուն ա օնում, օցն ասում ա.—Քյինիլ պիտիմ թաքավերեն ըխճըկանը վիզնվը տամ, հու կյա, պեց չեմ թուղըլական, վըեր տու կյաս, պեց ըմ թուղըլական, թաքավերը քեզ լնվ, վըեսկավ, ըրծաթավ, տես-տեսավ հղե յա տիեսնական, տրանա եսը մին օրիշ թաքավերու տղու վիզնվ ըմ տլական, ըսպանեմ, տրան մուտանասվըեշ, վըեր եկեր, թաքավերեն տըղեն պեց ըմ թուղըլական, քեզ կծեմ, ըսպանեմ։

Մին քանի օրան եսը օցը քյինում ա էտ երգյիրին թաքավերեն ըխճըկանը վիզնվը տամ, պեց չի թողում։ Հինչքան իմասուն, խըելունք մարթիքյ ըն ինում, լոխ կյամ ըն, վըեր ըխճըկանն ազատեն, կարում չըն, օցը պեց չի թողում։ Թաքավերեն ախճիգյը օրը օրեն յիրա հնլվում-մաշվում ա, լիհա վըեր հոքուն յիրա յա հանում, էտ մարթը քյինում ա ասում.—Ես օվանչի չըմ, ըսկացալ ըմ, վըեր իստի մին օց թաքավերեն ըխճըկանավն ա տուվալ, պեց չի թողում, եկալ ըմ, վըեր նրան էտ օցան ազատեմ։ Տրան տըեղ ըն տամ, մանում ա ըխճըկանը օթաղը, մին էրկու հետ շուվշուվամ, օցը ըխճըկանը պեց ա թողում, քյինում։ Ախճիգյը օշը կլեխն ա հըվաքում, եր կենում նստում։ Սաղ պալատեն ժողովուրթը ուրխանում ըն, թաքավերն էլ էտ մարթին վըեսկավ ու ըրծաթավ մին քանի հորե պեռնել ա տամ, հղե քցում։

Մին քանի ամըեսա վըեր անց ա կենում, էտ օցը քյինում ա մին օրիշ թաքավերու տղու անավ տամ, պեց չի թողում։ Էտ երգյիրումը հինչքան մարթ ըն քյինում-կյամ, կարում չըն թաքավերեն տղեն էտ օցան ազատեն։ Խնթիրը հանում ա էտ թաքավերեն, վըեր էահինչ երգյիրումը իստի մին մարթ կա, իրանց թաքավերեն ըխճըկանը էտենց մին օցա ըզատալ ա։ Էտ թաքավերը մարթիքյ ա ղարկում հանմեն երգյիրին թաքավերեն կոշտը, տրանք ասում ըն դե սհենց նեղ տըեղ ընք, էտ մարթին ղարկե, կյա մըեր թաքավերեն տղեն էտ օցան ազատե։ Թաքավերն էտ մարթին կանչում ա կոշտը, ասում սհենց պեն կա, պիտի քյինիս մըեր հըրևան թաքավերեն տղեն էտ օցան ազատես։ Էտ մարթը թե՝ կարալ չըմ, էտ մինը շատ տիժվար ա, վախում ըմ օցն ինձ վնաս տա։ Թաքավերն ասում ա.—Վըեր իմ ախճկանավըս տված օցը հըոըցըրալ ըս, էտ էլ կըկարես, հղե իլ, քյինի։

Վերջը, էտ մարթը կարում չի մերժի, էտ երգյիրին թաքավերեն մարթուցը նհետ հղե յա ինում, քյինում։ Վըեր հանում ա

Նրա պալատը, մտնում տղին օթաղը, օջը տրան տրեսնում ա, ասում.—Գա քեզ ասալ չը՞մ, վրեր կյանվրեչ կոշտրս, վրեր կյանս, տղին պեց ըմ թուղբլական, քեզ կծեմ, ըսպանեմ. մեհենգյ հինչ կա՞նես, վրեր ասածրս անեմ։ Էտ մարթը թա՝ հանլա կաց, տրես հի՞նչ ըմ ասում, ետնան հինչ անում ըս ըրա, ես տղին ըզադիլի հետե չըմ եկալ, Զեյնաբը հորան տուս ա եկալ, տրեղրտ գյիդացալ ա, քըզլըրա յա կյամ, կարում ըս կլինիրտ ըզադե, պրծըցըրու, թա չէ՝ նրա հինարը տու վրս տրեսալ։

Էտ օջը վրեր Զեյնաբեն անումն ըսկանում ա, թաքավրերեն տղին պեց ա թոզում, քյինում։ Տրանա ետը մին էլ էտ թաքավրերն ա մին քանի հորե վրեսկավ, ըրծաթավ պեռնիլ տամ, զարկում էտ մարթին տոն։ Տա հըրուստանում ա, տանում իրանց երգյիրին ամենաաշկի ինգյած մարթուցը մինը։